

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ  
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27.05.2016թ. ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 30-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում:

/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

2. ԵՊՀ ԻՄ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին:

/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

3. ԵՊՀ ԻՄ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին:

/Զեկուցող Ս. Ա. Առաքելյան/

4. Ընթացիկ հարցեր:

➤ ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին:

➤ ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ պ.գ.թ. Վարդան Արամայիսի Ալեքսանյանի «Հին Հունաստանի

պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկի  
հրատարակության երաշխավորելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց  
չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի  
օրակարգը:

**Օրակարգի առաջին՝** ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման  
ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում հարցի  
վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:  
Տնօրենը նշեց, 2016թ. ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական  
աշխատանքների հաշվարկի համար հիմք ենք ընդունելու 2015 թվականի  
ապրիլի 18-ի թիվ 9 նիստում հաստատված նորմերը առանց  
փոփոխությունների, և հավելեց, որ ԵՊՀ-ում նույնպես համապատասխան  
նորմերում փոփոխություն չի կատարվել:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 16/1**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի  
մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի  
պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի  
կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական  
համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական  
աշխատանքների հաշվարկի համար հիմք ընդունել 2015 թվականի  
ապրիլի 18-ի թիվ 9 նիստում հաստատված նորմերը առանց  
փոփոխությունների:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Օրակարգի երկրորդ՝** ԵՊՀ ԻՄ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա ներկայացրեց կատարված փոփոխությունները և նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգում էական փոփոխությունն այն է, որ թեկնածուի փաստաթղթերը դիտարկվելու են մանդատային հանձնաժողովում: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետը (հանձնաժողովի նախագահ), ԵՊՀ ԻՄ արհեստակցական կազմակերպության նախագահը, գիտական քարտուղարը (հանձնաժողովի քարտուղար), իրավախորհրդատուն, անձակագմի կառավարման բաժնի կադրերը սպասարկող ավագ մասնագետը: Թեկնածուն, որպեսզի կարողանա ընտրությանը մասնակցել պետք է առնվազն 7 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունենա:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, ԵՊՀ ամբիոնի վարիչի ընտրության կարգում նույնպես նմանատիպ փոփոխություն է կատարվել:

**Արտահայտվեցին** – ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի քարտուղար Մ. Աթոյանը, ԵՊՀ ԻՄ իրավախորհրդատու, ԵՊՀ ԻՄ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Ա. Հովհաննիսյանը:

Նրանց կողմից կարևորվեց հետևյալ փոփոխությունները.

- Արգելվում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող թեկնածուների մասնակցությունն ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին՝ երրորդ ժամկետով,
- ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդները պետք է ունենան առնվազն 7 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ

- վերջին 5 տարում տպագրված մենագրություն, դասագիրք, կամ առնվազն 5 հոդված՝ տպագրված ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում» ընդգրկված պարբերականներում:

Նշվեց, որ այս պահանջները լրացուցիչ շարժառիթ կլինեն պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման համար:

### ***Որոշեցին***

#### **Որոշում 16/2**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 8-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2011թ. փետրվարի 24-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Օրակարգի երրորդ՝** ԵՊՀ ԻՄ դեկանի ընտրության ընթացակարգը (նոր խմբագրությամբ) հաստատելու մասին հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա ներկայացրեց կատարված փոփոխությունները և նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի դեկանի ընտրության ընթացակարգը խմբագրման արդյունքում բավականին պարզեցվել է: Դեկանի հավակնորդ կարող է լինել այն պրոֆեսորը կամ դոցենտը, որը ունի գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան և առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, առաջադրվելու է ֆակուլտետի ստորաբաժանումների կողմից կամ ինքնաառաջադրվելու է, ընտրվելու է 5 տարի ժամկետով ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում, փակ գաղտնի քվերկությամբ, ընդ որում նույն անձնավորությունը անընդմեջ կարող է պաշտոնավարել դեկանի պաշտոնում ոչ ավելի, քան 2 անգամ:

**Արտահայտվեցին** – ԵՊՀ ԻՄ իրավախորհրդատու, ԵՊՀ ԻՄ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Ա. Հովհաննիսյանը:

Նրանց կողմից ևս կարևորվեց կատարված փոփոխությունները և առաջարկեց նոր խմբագրությամբ ընթացակարգը հաստատել:

**Որոշեցին**

### **Որոշում 16/3**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 8-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ դեկանի ընտրության ընթացակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 2011թ. փետրվարի 24-ին Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ֆակուլտետների դեկանների ընտրությունների ընթացակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

### **Ընթացիկ հարցեր:**

*Հսեցին՝* ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի կազմի փոփոխությունները կապված են հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի փոփոխության, ՄԿՈԱ բաժնի վարիչի փոփոխության, ԵՊՀ ԻՄ ՈԻԽ նախագահի և այլ գիտական խորհրդի անդամ ուսանողների փոփոխության հետ: Մասնավորապես նշվեց, որ հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել պ.գ.դ. պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, ՄԿՈԱ բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Մարիետա Ալբերտի Ճաղարյանը, իսկ ՈԻԽ նախագահ է ընտրվել Իսկուհի Շաղբաթյանը (ամբողջական անվանական ցանկը հավելված 3-ում):

### *Որոշեցին*

#### **Որոշում 16/4**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 22-րդ, 23-րդ կետերով, և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 7-

րդ և 8-րդ կետերով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի փոփոխված կազմը՝ համաձայն հավելված 3-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Լսեցին** - ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանի «Հին Հունաստանի պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակության երաշխավորելու մասին ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը 16.05.2016թ. կայացած թիվ 14 նիստում որոշում է կայացրել դիմել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանի «Հին Հունաստանի պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկը հրատարակման երաշխավորելու համար:

Ներկայացված ձեռնարկի խմբագիրն է, պ.գ.թ., դոցենտ Դավիթ Թինոյանը: Ուսումնական ձեռնարկում ըստ թեմաների շարադրված է Հին Հունաստանի պատմությունը՝ սկսած Կրետե-Միկենյան շրջանից մինչև հելլենիզմի դարաշրջանը: Այն բաղկացած է 114 էջից, գրված է հայերեն:

**Արտահայտվեցին** – Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ պ.գ.դ. պրոֆեսոր Ա. Ներսիսյանը և այլոք: Նշվեց, որ ձեռնարկը նախատեսված է «Պատմություն» մասնագիտության ուսանողների համար: Ձեռնարկի հրատարակությունը օգտակար կլինի ժամանակաշրջանի

պատմությամբ մասնագիտացող ուսանողների, ինչպես նաև դասախոսների համար: Ձեռնարկը ներառում է Հին Հունաստանի պատմությունը սկսած Կրետե-Միկենյան շրջանից մինչև հելլենիզմի դարաշրջանը: Բուհական ուսումնական ծրագրին համապատասխան շարադրված են Հին Հունաստանի պատմության բոլոր կարևոր դրվագները: Ձեռնարկում առկա են անհրաժեշտ քարտեզներ և լրացուցիչ այլ նյութեր: Սույն ձեռնարկը Դասական Հունաստանի պատմությունը հայերենով ներկայացնելու հաջողված փորձ է, որը որպես դասագիրք առաջինն է հայ իրականության մեջ:

### *Որոշեցին*

#### **Որոշում 16/5**

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

Երաշխավորել հրատարակության ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Արամայիսի Ալեքսանյանի «Հին Հունաստանի պատմություն» ուսումնամեթոդական ձեռնարկը:

Գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար \_\_\_\_\_ Ս. Ս. ԱԹՈՅԱՆ

27.05.2016թ.